Հայտարարություն 1in.am-ի ներկայացուցիչների նկատմամբ ոստիկանության բռնի գործողությունների և լրագրողի հասցեին ՀՀ ոստիկանապետի վիրավորական արտահայտության կապակցությամբ

Ապրիլի 25, 2016

Ապրիլի 22-ին Երեւանի Բաղրամյան պողոտայում ոստիկանները կրկին բռնություն են կիրառել ու խոչընդոտել ԶԼՄ ներկայացուցիչների օրինական մասնագիտական գործունեությունը: Այս անգամ թիրախ են դարձել 1in.am լրատվական կայքի օպերատորներ Նարեկ Բարսեղյանը եւ Սեւակ Սողոմոնյանը, որոնք լուսաբանում էին «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնության երթը դեպի նախագահական նստավայր:

Հարձակման հետեւանքով վնասվել են 1in.am-ի նկարահանող տեսախցիկը, ուղիղ եթեր ապահովող սարքը, ինչպես նաեւ խմբագրությանը պատկանող հեռախոսը: Իսկ օպերատորներին բիրտ ուժի գործադրմամբ նստեցրել են ոստիկանական մեքենա՝ սահմանափակելով տեղաշարժը եւ խոչընդոտելով նրանց գործունեությունը: Այս ամենից 1in.am-ի աշխատակիցներին չի պաշտպանել նույնիսկ ներկայանալն ու խմբագրության վկայականը ցույց տալը:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում լրագրողները ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանից պարզաբանումներ պահանջեցին վերոհիշյալ դեպքերի վերաբերյալ՝ նշելով, որ ոստիկանությունն իր ձեռագիրը չի փոխում: Ոստիկանապետը նախ հակադարձեց. «Դուք դեղնում եք, գունաթափվում եք…», ապա 1in.am-ի թղթակից Սիրանույշ Պապյանի դիտարկմանը, թե մենք չենք տեսնում ձեր բարեփոխումները, արձագանքեց բարձրաստիճան պաշտոնյային անհարիր խոսքերով. «Ես էլ քո մեջ կին չեմ տեսնում…»:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, արտահայտելով մեր վրդովմունքը վերոհիշյալ դեպքերի առնչությամբ, պահանջում ենք.

– ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանից՝ միջոցներ ձեռնարկել 1in.am-ին պատճառված վնասը փոխհատուցելու համար, հրապարակային ներողություն խնդրել լրագրող Սիրանույշ Պապյանից եւ այսուհետ թույլ չտալ վիրավորական արտահայտություններ լրագրողների հասցեին,

– ՀՀ դատախազությունից՝ ընդունել սույն հայտարարությունը որպես հաղորդում հանցագործության մասին եւ պատասխանատվության ենթարկել վերոհիշյալ իրադարձությունների ժամանակ իրենց լիազորությունները չարաշահած ոստիկաններին:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ–ՀԱՅԱՍՏԱՆ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ